ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 09 » « ապրիլի » 2018թ.**
ժամը 11 ^{00}

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ս.Նավասարդյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի ապրիլի 9-ին, ժամը 11:00-ին, ՀՀ բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ հասցեում:

2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի ապրիլի 4-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Ֆլեշ Մոտորս» ՍՊ, «Ժակ և Գոռ» ՍՊ, «Ռինոն» ՍՊ և «Տուրբոլայն» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ռ.Զոբանյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ իր կողմից հաստատված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմումը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարության gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները չափաբաժին 1-ով հաղթող ճանաչել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին, չափաբաժին 2-ով «Ռինոն» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 4, 5-ով «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ին, չափաբաժիններ 3, 6, 7, 8 և 9-ով «Տուրբոլայն» ՍՊԸ-ին:

4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/20» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Լ.Ավետիսյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Ս.Նավասարդյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան